ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«16» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0210-23

Ձեռնարկողը՝ ***«Ճան Շին» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 28փ., տ.3

Գործունեությունը՝ ***Լճաշենի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 8 թերթ

15156

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0210-23

«16» 11 2023թ.

Լճաշենի բազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Պատվիրատու՝	«Ճան Շին» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզի Սևան համայնք, Լճաշեն բնակավայր

Նախատեսվող Լճաշենի բազալտի հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Սևանի տարածաշրջանում, Լճաշեն գյուղից՝ 1.0–1.9 կմ հարավ-արևելք, մարզկենտրոնից՝ 22.0 կմ հյուսիս-արևմուտք և Երևանից 80 կմ հյուսիս-արևելք հեռավորության վրա: Նախագծվող տեղամասի մոտակա բնակավայրերն են Սևան քաղաքը (4.5կմ), Լճաշեն (1.7կմ), Վարսեր (6.3կմ), Չկալովկա (2.2կմ) բնակավայրերը:

Օգտակար հանածոների արդյունահանման համար նախատեսված տարածքի հողերը համայնքային սեփականության են, նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, իսկ գործառնական նշանակությունը՝ այլ հողեր:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 2-րդ կետի գ. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող հանքավայրի տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական տարածքում, ծովի մակերևույթից 1965–1995 մ բարձրության վրա, որը պատկանում է Սևանի ֆլորիստիկական շրջանին: Ուսումնասիրվող տարածքի մակերեսը կազմում է 1.497 հա:

Լճաշենի բազալտների հանքավայրի տարածաշրջանը բնորոշվում է լեռնատափաստանային և մարգագետնատափաստանային բուսածածկույթով՝ տարախոտա-հացազգային խոտաբույսերի տարածմամբ:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Հայկական հրաբխային բարձրավանդակի տեկտոնահրաբխային լեռնազանգվածների Արագած-Սյունիքի ենթազոնայի Գեղամա լեռնավահանին:

Համաձայն հաշվետվության Լճաշենի բազալտի հանքավայրը գտնվում է Սևանա լճի ջրհավաք ավազանի սահմանային գոտում՝ «Սևան» ազգային պարկի սահմաններից մոտ 1.0 կմ հեռավորության վրա: Նախատեսվող գործունեության տարածաշրջանի հիմնական ջրագրական միավորը Սևանա լիճն ու Հրազդան գետն են:

Համաձայն հաշվետվության նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են աղբյուրները: 1961-1967թթ. կատարված երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հորատված 14 հորատանցքերից, որոնք հորատվել են 20-ից 40 մ խորությամբ, ջրատար շերտ չի հատվել: Լճաշենի բազալտների հանքավայրի տարածքում, մակերևույթային ջրերի հոսքը դեպի նախատեսվող բացհանք հնարավոր է միայն մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնց տարեկան միջին քանակը, բազմամյա դիտարկումների տվյալների համաձայն, կազմում է 600մմ:

Հաշվի առնելով հանքավայրի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները և ապարների բարձր ջրաթափանցելիությունը՝ բացհանք ներթափանցող ջրերը ենթարկվելու են բնական դրենաժի:

Հանքավայրի շրջանի կլիման բնութագրվում է համեմատաբար երկարատև ցուրտ ձմեռով և տաք ամառով: Ձնածածկույթը պահպանվում է մոտ չորս ամիս: Օդի ջերմաստիճանն ամռանը հասնում է +32°C, իսկ ձմռանը՝ -33°C: Տարեկան միջին ջերմաստիճանը +5°C է:

Հանքավայրի շրջանում սողանքային մարմիններ կամ սողանքածին երևույթներ առկա չեն:

Համաձայն հետազոտության՝ բուն հանքավայրի տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ, հազվագյուտ, վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Համաձայն ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կարծիքի, տարածքում պատմական և հնագիտական հուշարձանները բացակայում են:

Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտների հանքավայրի նախագիծը կատարվել է «ՃԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Բացահանքի տարածքը ARM WGS-84 կոորդինատային համակարգով բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով.

1.X=8495719 Y =4485313
2.X=8495611 Y=4485349
3.X=8495588 Y=4485459
4. X=8495674 Y=4485475
5. X=8495731 Y=4485364

Բացահանքի օտարման տարածքը կազմում է 1.497հա, ծառայման ժամկետը՝ 20 տարի:

Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտի հանքավայրի պաշարներն առաջին անգամ հաստատվել են ՀՍՍՀ ՊՏՀ-ի կողմից 1961թ. հունիսի 9-ին 113 արձանագրությամբ: Այնուհետև, հանքավայրի արևելյան շարունակության տեղամասում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում ՀՍՍՀ ՊՏՀ-ի 1967 թվականի փետրվարի 8-ի թիվ 153 արձանագրությամբ հաստատված պաշարները կազմում է,

A -1348.4 հազ.մ^3
B-4243.4 հազ.մ^3
C1-6049.6հազ.մ^3
A + B + C1 11641.4հազ.մ

Շինաքարի ելքը 33.3% է, որը կարող է լինել ավելի մեծ 12-15 մ խորություններում:

«ՃԱՆ ՇԻՆ» ՍՊԸ–ի կողմից նախագծված տեղամասում պաշարները կազմում են՝ ըստ B կարգի՝ 521600 մ³:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով՝ տարեկան 26080մ³ արտադրողականությամբ մարվող պաշարով:

Համաձայն հաշվետվության՝ բազալտներն իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով ապահովում են «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-62 ՀՍՏ-ի և «Պատքարեր լեռնային ապարներից, «Տեխնիկական պայմաններ» ԳՈՍՏ 4001-58 պահանջներին և կարող է օգտագործվել որպես բնական պատքար և հիմքի համար քար: Արդյունահանման թափոնները կարող են օգտագործվել որպես շինարարական խիճ:

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով նախնական փխրեցմամբ՝ DOOSAN DX 190W էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են.

- հանքաստիճանի բարձրությունը – 2.5 մ,
- անվտանգության բերմայի լայնությունը – 1.0 մ,
- աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը – 800,
- աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը 18-20 մ,
- նախատեսվում է արդյունաբերական հրապարակի կարգաբերում-220մ² մակերեսով:

Նախագծվող բացահանքը վերջնական դիրքում ունենալու է հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը – 172մ,
- ամենամեծ լայնությունը – 123մ,
- մակաբացման ապարների միջին հզորությունը – 0.05մ,
- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը՝- 521.6հազ.մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը՝– 436.3հազ.մ³,
- արդյունահանվող պաշարների տարեկան քանակը՝– 21815մ³,
- մակաբացման ապարների քանակը – 800մ³:

Բացահանքի հանույթի բարձման աշխատանքներն անխափան կատարելու համար նախատեսվում է մեկ XCMG LW 300 FN մակնիշի անվավոր բարձիչ, որը լիովին բավարարում է բացահանքի արտադրական թափոնների՝ բարձման աշխատանքները կատարելու համար(55.96մ³/հերթ):

Համաձայն հաշվետվության օգտակար հանածոյի պատքարերի օրական 27.94մ³ և արտադրական թափոններն օրական՝ 55.96մ³ ծավալով՝ վաճառվելու է բացահանքից և դրանց տեղափոխումը կատարվելու է սպառողի տրանսպորտային միջոցներով:

Բացահանքի շահագործման ընթացքում տեղի են ունենալու օգտակար հանածոյի անխուսափելի կորուստներ (նախագծային կորուստներ): Կորուստներ, որոնք պայմանավորված են հանքավայրի լեռնատեխնիկական և շրջակա միջավայրի պայմաններով: Դրանք այն կորուստներն են, որոնք բնամասերի տեսքով մնում են ընդերքում, թողնվում են բացահանքի կողերում՝ հանքաստիճանների եզրերի թույլատրելի թեքությունն ապահովելու համար (85300մ³ կամ 3.42%): Շահագործողական կորուստներ, որոնք առաջանալու են օգտակար հաստաշերտի տանիքը մակաբացման ապարներից

մաքրելու ժամանակ: Այդ կորուստների միջին հզորությունն ընդունվում է 0.10մ: Այսպիսով՝ կորուստները կկազմեն ընդամենը՝ 85300մ³ կամ 16.35%:

Հանքավայրի բացումը կատարվելու է հյուսիս արևմտյան մասի՝ 1987.5մ բարձրության նիշից:

Բացահանքի տարեկան, ամսական և օրական արտադրողականությունը հետևյալն է՝

N	Արտադրանքի անունները	Բացահանքի հաշվարկային	
		Տարեկան մ³	Օրական մ³
1.	Լեռնային զանգված	21855	84.05
2.	Մակաբացման ապարներ	40	0.15
3.	Օգտակար հանածոյի հանույթ	21815	83.9
4.	Շինաքար	7265	27.94
5.	Հանույթից առաջացած թափոններ	14550	55.96

Համաձայն հաշվետվության՝ նախատեսվում է ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հարավ արևելյան կողմից անցնող գրունտային ավտոճանապարհի 1968.0 մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1987.5 մ բարձրության հորիզոն: Ավտոճանապարհի երկարությունը կազմելու է 208 մ, լայնությունը՝ 6 մ, ամենամեծ թեքությունը՝ 93.75‰: Ավտոճանապարհն աստիճանաբար կտրտվելով իջնելու է մինչև 1967.5 մ բարձրության հորիզոնը, հետո աստիճանաբար խրամով խորանալու է մինչև 1955.0մ-1952.5մ բարձրության հորիզոնները, այնուհետև, նաև 1950.0մ-1940.0մ բարձրության հորիզոնները:

Ավտոճանապարհների անցումը, մակաբացման ապարների հավաքումը, կուտակումը կատարվելու է բուլդոզերի օգնությամբ:

Ելնելով նախագծում ընդունված մշակման եղանակից, ինչպես նաև լեռնաերկրաբանական պայմաններից ընտրված է ներքին բուլդոզերային լցակույտաառաջացում:

Բացահանքի շահագործման շինարարական շրջանում 1987.5մ բարձրության հորիզոնում 900մ³ ծավալով բացված պաշարներով ապահովելու համար՝ 120մ³ ծավալով մակաբացման ապարները բուլդոզերով հավաքվելու և տեղափոխվելու են դեպի բացահանքի հարավ արևմտյան մասում ձևավորվող լցակույտեր:

Մակաբացման ապարները բացահանքի մշակման սկզբնական շրջանում նախատեսվում է կուտակել բացահանքի սահմաններում, նրա հարավ արևելքում՝ հողաբուսական շերտը N1, իսկ բազալտի կտորներով դելյուվիալ նստվածքները N2 ժամանակավոր լցակույտերում: Հողաբուսական շերտի N1 լցակույտը գտնվելու է N2 բազալտի կտորներով դելյուվիալ նստվածքների լցակույտի հարևանությամբ: Մակաբացման ապարները տեղափոխվելու են լցակույտ բուլդոզերի օգնությամբ, որի արտադրողականությունը 800 մ³/հերթ է:

Շահագործման 18-րդ տարվանից սկսած, հանքի տարածքի մի մասը մինչև հատակը շահագործվելուց հետո՝ շահագործմանը զուգընթաց N1 և N2 լցակույտերի մակաբացման ապարներն անհրաժեշտ քանակությամբ կլցվեն բացահանքի բացված հատակների վրա (1952.5, 1950.0, 1940.0մ) 0.1մ բարձրությամբ և կհարթեցվեն, կատարվելու է խախտված տարածքների վերականգնում: Մինչև շահագործման ավարտը կատարվելու է 710մ³ ծավալի մակաբացման ապարների տեղափոխում և հարթեցում:

Բացահանքի շահագործման ավարտից հետո իրականացվելու է խախտված հողատարածքների լեռնատեխնիկական վերականգնում՝ տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիա: Լեռնատեխնիկական վերականգնման ընդհանուր մակերեսը կազմելու է 0.815հա: Խախտված հողատարածքների վերականգնման համար նախատեսվում է 815.6 հազար ՀՀ դրամ:

Համաձայն հաշվետվության՝ բացահանքի շահագործման ընթացքում առաջանալու են նաև բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ.

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների, մեխանիզմների շահագործման արդյունքում՝ օգտագործված շարժիչների բանեցված դիզելային յուղեր (0.11տ/տարի/ և այլն, որոնք հավաքվելու են առանձին մետաղական տարաների մեջ և պայմանագրային հիմունքներով հանձնվելու են յուղերի և քսայուղերի վերամշակման կետերին,

- ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շահագործման արդյունքում առաջացած բանեցված անվադողեր (0.2տ/տարի), բանեցված կապարե կուտակիչներ և խոտան՝ (0.2տ/տարի), որոնք հավաքվելու են նախատեսված տարածքներում, հետագայում վերամշակող ընկերություններին պայմանագրային հիմունքներով վաճառելու համար,

- պինդ կենցաղային թափոնները (կենցաղային աղբ), կուտակվելու է տարածքում առկա աղբամանների մեջ և տեղափոխվելու է մոտակա աղբահավաք կետեր:

Գործունեության իրականացման ընթացքում ջուրն օգտագործվելու է խմելու (83.98մ^3/տարի) և տեխնիկական (1750լիտր) նպատակներով: Տեխնիկական նպատակով ջուրն օգտագործվելու է ճանապարհների, արտադրական հրապարակների, լցակույտերի, 10820մ^2 մակերեսով ընդհանուր տարածքների փոշենստեցման համար: Խմելու ջրի մատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը 0.27մ^3 օրական քանակությամբ՝ հավաքվելու են բետոնային հորում, որը տեղափոխվելու է մասնագիտացված կազմակերպության կողմից: Համաձայն հաշվետվության՝ ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ հանքարդյունահանման աշխատանքների տեխնոլոգիայով շահագործման ժամանակ արտահոսքեր չեն առաջանալու:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

Հաշվի առնելով, որ Սևանա լիճը գտնվում է գործունեության տարածքից 1.1կմ հեռավորության վրա, նախագծով նախատեսվում է լրացուցիչ միջոցառումներ, բացահանքի հյուսիս-հյուսիս-արևելյան եզրագծով իրականացնել կանաչապատում՝ դիմացկուն և դեկորատիվ ծառաթփատեսակներով, առաջնորդվելով Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման դրույթներով:

Համաձայն հաշվետվության՝ հանքավայրի արդյունահանման աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու արդյունահանման, լեռնակապիտալ աշխատանքների, բեռնման-բեռնաթափման, տեխնիկական միջոցների շահագործման՝ աղմուկի, օդային ավազան վնասակար նյութերի արտանետումների, ջրային և հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային փոփոխության և ամբողջականության պահպանման, թափոնների առաջացման հետ:

Բացահանքի շահագործումից, տրանսպորտի օգտագործումից մթնոլորտ են արտանետվելու փոշի և ծխագազեր, բենզինային շարժիչներով աշխատող մեքենաներից՝ ազոտի և ածխածնի օքսիդներ, ածխաջրածիններ: Համաձայն գնահատման հաշվետվությամբ ամրագրված մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների

արդյունքների՝ սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ.

- փոշենստեցման նպատակով ճանապարհների և արտադրական հրապարակի ջրում տարվա չոր և շոգ եղանակներին՝ օրը 2 անգամ,
- բոլոր տեսակի մեքենաների և սարքավորումների վրա գազազտիչ սարքերի, ձայնախլացուցիչների տեղադրում, մեքենաների սարքին վիճակում շահագործում,
- տեխնիկական միջոցների սպասարկում նախապես որոշված սպասարկման կետերում,
- օգտագործված յուղերի ու քսայուղերի, նավթամթերքների առանձին տարաների մեջ հավաքում, պահում բացահանքի արտադրական հրապարակի հատուկ հատկացված վայրում,
- շինարարական տեխնիկայի սպասարկման և կայանման վայրերում ավազի կամ մանրախճի տեղադրում՝ ջրային ռեսուրսների մեջ արտահոսքը կանխելու նպատակով,
- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում՝ շաբաթը մեկ անգամ,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկություն բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով,
- ՀՀ կառավարության 2014թ.-ի հուլիսի 31-ի N781-Ն որոշման դրույթների իրականացում՝ պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում,
- աշխատողների առողջության և անվտանգության ապահովում, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և այլն:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ հաշվարկվել է հանքավայրի փակման համար ֆինանսական երաշխիքը՝ 1325.6 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները՝ պետք է նշել, որ նախագիծը և հաշվետվությունը մշակվել են բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրական պահանջներին և նորմատիվաիրավական ակտերին համապատասխան:

Հաշվի առնելով, որ հանքավայրի տարածքը գտնվում է Սևանա լճի ազդեցության գոտում՝ նախագծով նախատեսվում են մի շարք միջոցառումներ և սահմանափակումներ Սևանա լճի տարածաշրջանի էկոհամակարգը չխաթարելու և շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու կամ մեղմելու նպատակով: Արդյունահանման աշխատանքները կատարվելու են բաց լեռնային եղանակով, բացառվելու են պայթեցման աշխատանքները, ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենալու, քանի որ հանքավայրի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայի կիրառմամբ արտահոսքեր չեն նախատեսվում, հիմնականում օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները, հանքավայրի որոշ հորիզոնների մոտեցման համար նախատեսվում է ընդամենը 208մ ճանապարհի կառուցում: Արդյունահանման տարածքներում կենսաբազմազանության բացակայությունը պայմանավորված է տարածքի անտրոպոգեն ազդեցության հետ:

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ շրջակա միջավայրի նախարարության

ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, կադաստրի կոմիտեն: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի դրական կարծիքը, ՀԱԱՀ «Ամանտառագիտության և Ագրոէկոլոգիա» ամբիոնը:

Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը լրամշակվել է, հաշվի առնելով նաև մասնագիտական կառույցների կողմից ներկայացված առաջարկությունները և դիտողությունները: Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում և Լճաշեն բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը պետք է տրամադրվի պետական մարմիններին և համապատասխան պահանջի դեպքում՝ հանրությանը:
- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական նախագծման նորմերին, բնապահպանական և սոցիալական կառավարման ծրագրի պահանջներին:
- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները՝ մասնավորապես բացառել հանքավայրում պայթեցման աշխատանքները:
- Շահագործման ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումն (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Ապահովել հաշվետվությամբ ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին: Պարբերաբար իրականացնել մոնիթորինգ, առաջնորդվելով 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն ՀՀ կառավարության որոշման պահանջներով:
- Հաշվի առնելով, որ հայցվող տարածքի հարևանությամբ գտնվում է «Քարե ծով» քարացրոններ հուշարձանը (չինգիլներ), անհրաժեշտ է բացառել ցանկացած գործողություն, որը կխաթարի հուշարձանի արտաքին տեսքը, էկոհամակարգի կայունությունը:
- Հանքավայրի և հուշարձանի սահմանագծով իրականացնել երկշերտ ծառատունկ, որը կտարանջատի հանքավայրի և հուշարձանի տարածքը՝ պահպանելով «Քարե ծով» քարացրոններ հուշարձանի գեղագիտական տեսքը:

- Բացառել տարածքից դուրս գործառույթների իրականացումը՝ մասնավորապես լցակույտերի, թափոնների տեղադրումը:
- Հանքավայրի հյուսիս-հյուսիս-արևելյան եզրագծով իրականացնել երկշերտ ծառատունկ՝ Սևանա լճի և բնության հատուկ պահպանվող տարածքի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով:
- Հանքավայրի արդյունահանման ժամանակ ջրօգտագործումն իրականացնել այնպես, որ չառաջանան ավելորդ մակերևութային ջրեր, ապահովել հորատիպ զուգարանում հավաքված կեղտաջրերի ժամանակին հեռացումը՝ հոսքաջրերի ներթափանցումը հողային, ջրային ռեսուրսներ բացառելու նպատակով:
- Գործունեության ընթացքում առաջացող բուսահողը պահպանել Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N1404-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ բացառելով բուսահողի վրա հնարավոր բացասական ազդեցությունները:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով՝ գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ճան Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Լճաշենի բազալտների հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Արմինե Վարդանյան